

ՀՀ Արմավիրի մարզի Դոդս գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի առաջին կիսամյակի աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակից Վ.Աբրահամյանի, համայնքի ավագանու 5 անդամների, բուժ ամբուլատորիայի, հայ փոստի աշխատակիցների ինչպես նաև համայնքի թվով 42 բնակիչների.

16.07.2015 թվական

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դոդս գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով <Տեղական ինքնակառավարման մասին>,<Իրավական ակտերի մասին>, ՀՀ օրենքներով, գյուղապետարանի աշխատակազմի ավագանու և գյուղապետարանի ենթակայության հիմնարկի աշխատակիցների միջոցով իրականացնում է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր վիճակագրությունները:

2015թ . գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները: Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել են որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում են Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը , ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման ասպարեզում:

Գյուղը ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

Կան նա չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողերի անեկամտաբերությունը
2. Հողասեփականատերերի բացակայությունը համայնքից
3. Տարիքային պատճառները
4. Գյուղտեխնիկայի անբավարարությունը
- 5.Ջրի սակագինը:

Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքները, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները: Մարզպետարանից համայնքին հատկացած 60տ ազոտական պարատանյութը բաժանվել է բնակչությանը: Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական

Տրվել է դրամական օգնություն համայնքի սոցիալապես անապահով 18 բնակիչների, ՀՄՊ զոհված մասնակիցների 2 այրիներին, արցախյան մարտերի 4 ազատամարտիկներին: Համայնքում բարձր է պատասխանատվությունը գորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողնշկան:

Համայնքում կատարվել է փողոցների և դաշտային ճանապարհների փոսայցումների աշխատանքներ:

<Մշակույթի> տանը գործում է ազգային պարի խմբակ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2015թվականի բյուջեով նախատեսված եկամուտները և ծախսերը

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

01 հուլիսի 2015 թ. դրությամբ

հազ. դր

NN	եկամուտներ	տարեկան նախատեսված	կիսամյակ		կատ%	
			նախատես./ փաստացի	նախատես./ փաստացի	նախատես./ փաստացի	նախատես./ փաստացի
1	հողի հարկ	6661.8	1720.0	1552.8	90.0	23.3
2	գույքահարկ	2883.9	1832.0	1988.1	108.5	68.9
3	տեղ տուրք	150.0	75.0	52.2	69.3	34.8
4	վարձ վճարողներ	500.0	150.0	149.4	99.6	29.9
5	այլ ոչ հարկ.եկ.					
6	դոտացիա	19754.4	9877.2	9876.4	100.0	50.0
7	տարեսկ.մնաց.	293.8	293.8	293.8	100.0	100.0
	ընդամենը	30243.9	13828.0	13912.6	100.6	46.0

ԾԱԽՍԵՐ

01 հուլիսի 2015 թ. դրությամբ

հազ.դր

	ծախսեր	տարեկան նախատեսված	կիսամյակ		կատ%	
			նախատես./ փաստացի	նախատես. / փաստացի		
	վարչական բյուջե	29950.1	13630.0	12991.2	95.3	43.3
1	տեղական ինք./վարչ/	19816.0	8900.0	8314.5	93.4	41.9
2	մշակույթ/վարչ/	3350.0	1900.0	1862.6	98.1	55.6
3	սոց ծրագիր	3500.0	2320.0	2310.0	99.6	66.0
4	սան մաքրում	1210.0	510.0	504.1	98.8	41.7
5	պահուստային ֆոնդ	892.1	0	0	0	0
	ֆոնդային բյուջե	293.8	293.8	0	0	0
6	սարքավոր. ձեռք բ.	293.8	293.8	0	0	0
7	ընդամենը	30243.9	13285.0	12991.2	97.8	42.9

<Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն համայնքի բնակչությանը տրվել են 162 տեղեկանքներ և պատասխանվել է 29 դիմումի, 84 տարբեր բնույթի նամակների, անցկացվել է համայնքի ավագանու 3 նիստեր, որի ընթացքում կայացվել է 19 որոշումներ: 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի աշխատողների թվաքանակը կազմել է 9, որից 4-ը համայնքային ծառայողներ, իսկ <Մշակույթ> միացյալ տնօրինության աշխատողների թվաքանակը կազմել է 3 մարդ: Նշված ժամանակահատվածի համար աշխատավարձի վճարումը կատարվել է ժամանակին և աշխատավարձի պարտքեր չկան:


ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած համայնքի բյուջեով նախատեսված սոցիալ-տնտեսական զարգացման ուղղություններով իրականացված են միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ճանապարհների ասֆատապատում
2. Մանկապարտեզի շենքի կառուցում
3. <Մշակույթի> տան կապիտալ վերանորոգում

Դոդս համայնքի ղեկավար



Մ. Աղամյան

